Արձանագրություն N 2

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից **Հատուկ նշանակության մեքենաների** գնման նպատակով կազմակերպված թիվ **ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/2** ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

ք. Երևան «28»-ը հունիսի, 2024թ.

սկիզբ՝ ժամը 17:55 րոպեին

ավարտ՝ ժամը 18:00 րոպեին

2024 թվականի հունիսի 28-ին ժամը 17:55-ին, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի գրավոր հանձնարարականի հիմքով, տեղի ունեցավ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Կ. Ուլնեցու 31, ՀՎՀՀ՝ 0084644, էլեկտրոնային փոստի հասցեն՝ atdf@atdf.am) կողմից Հատուկ նշանակության մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) արտահերթ նիստը, որին ներկա էին Հանձնաժողովի 3 անդամները՝

Հանձնաժողովի նախագահող՝ Արմեն Ավագյան

անդամներ՝ Արման Ասատրյան, Գայանե Քարիմյան

Նիստը նախագահում էր Արմեն Ավագյանը, քարտուղարությամբ՝ Անահիտ Եղիազարյանի:

Նախագահը բացեց Հանձնաժողովի նիստը և հայտնեց, որ սույն նիստը հրավիրվել է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի գործադիր տնօրենի գրավոր հանձնարարականի հիման վրա: Հայտարարեց, որ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգի (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետի՝ Հանձնաժողովի նիստն իրավազոր է, այնուհետև՝ ներկայացրեց նիստի օրակարգը.

1. Ընթացակարգի գնման առարկաների նախահաշվային արժեքների փոփոխության անհրաժեշտության մասին.

Քննարկման և քվեարկման արդյունքում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0 ձայների մեծամասնությամբ

Որոշվեց

Հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Ընթացակարգի գնման առարկաների նախահաշվային արժեքների փոփոխության անհրաժեշտության մասին.

1. Ընթացակարգի գնման առարկաների նախահաշվային արժեքների փոփոխության անհրաժեշտության մասին.

2024 թվականի հունիսի 28-ին հատուկ նշանակության մեքենաների ձեռքբերման նպատակով կազմակերպված ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/2 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) պատասխանատու ստորաբաժանման կողմից ստացվել է զեկուցագիր, ըստ որի անհրաժեշտություն է առաջացել փոփոխել գնման առարկաների

նախահաշվային գները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ էլեկտրոնային աճուրդի www.armeps/auction.am էլեկտրոնային համակարգը հնարավորություն չի տալիս կատարել նախահաշվային գների փոփոխություն և տեխնիկապես պայմանագիր կնքելը դարձնում է անհնար, ուստի կողմ 3, դեմ 0 ձայների մեծամասնությամբ և ղեկավարվելով Կարգի 14-րդ կետի 6-րդ ենթակետով.

2. *Հանձնաժողովը որոշեց.*

2.1 Ընթացակարգը հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, այն է՝ պայմանագիր չի կնքվել,

2.2 Հաստատել ԿԳԿԿԹԿ-ԷԱՃԱՊՁԲ-2024/2 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության որոշումը՝ համաձայն հավելվածի:

Հանձնաժողովի նախագահող՝

Արմեն Ավագյան

անդամներ՝

Արման Ասատրյան

Գայանե Քարիմյան

քարտուղար՝

Անահիտ Եղիազարյան